ձեռամբ անարժանիս ի խնդրոյ տէր Նիկողայոս սրբազան քահանային որ էր սպասաւոր սուրբ Երուսաղէմայ և լուսաբար լուսաբուղխ սուրբ գերեզմանին Քի. ի վայելումն անձին իւրոյ զոր տէր Ա.Ծ. մեր պահեսցէ զինքն անփորձ և անսասան կենաւք ամէն.»։ Նիկողայոս 1657ին փակակաղ կարգուած է նաև Ս. Յակոբի տաճարին (ՄՁ. Թ. 232), հաւանական է որ ինքը նախապէս քահանայ էր և կողակցին շատ կանուխէն մեռնելովը միաբանակցեցաւ Ս. Յակոբի վանքին ու եպիսկոպոսանալով բարձրացաւ լսպ·ի պաշտօնին, յիշուած ձեռագրին յիշատակարանը կը յիշէ հայրը Ղազար, մայրը Մարիամ, մեծ մայրը Զիմաք և կողակիցը Աղրուն «որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քս.»։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵՊՍ. ԱԽՔԵՐՄԱՆՑԻ.— (Տնիեսքեր գեսին բերանը). 1483ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Երուսաղէմ, և գրի կ'առնէ Ս. Տեղեաց ուխտատեղիները այս խորագրով. «Այս ին տնօրինականաց Ս. Տեղիքն որ է Երուսաղէմ, զոր գրեցից սակաւս ի բազմացն..ես ծառայս Աստուծոյ Նիկողայոս եպս.։ Նիկողայոս եպս·ի Ս. Տեղեաց ինքնագիր այս ցուցակը 1483ին գրի առնուած է նոյն թուականէն քիչ առաջ գրուած ձեռագիրի մը մէջ։ Ալիշան նոյնը 1896ին հրատարակած է Անանստաս վրդ·ի «Վասն վանօրէից որ ի Ս. Քաղաքն յերուսաղէմ» գրքուածքին հետ, երկուքն ալ գաղղիերէն թարգմանելով և ծանօթագրելով։

Ախքերմանցի այս Նիկողայոս եպս·ին ինքնութիւնը մեզ անյայտ կը մնայ և չէ կարելի նոյնացնել ժամանակակից Անկիւրացի Նիկողայոս կամ Նիկողաոս եպս·ին հետ, որուն գործունէութիւնը տևած է մինչև 1485, և ոչ իսկ Պոլսի առաջին պատրիարք Յովակիմի յաջորդ՝ Նիկողայոս եպս·ի հետ որ պաշտօնավարած է 1478—1489։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԿՐՕՆԱՒՈՐ, ՊՈՆՏԱՑԻ.— Զիլ (=1478) թուին Ս. Յակոբի վանքին մէջ կ'սկսի ընդօրինակել Շարական մը և յիշատակարանին մէջ ալ կը գրէ այս տողերը. «Ի թվ Զիլ (=1478) ի Սուրբ Երուսաղէմ սկսեալ, և ապա եկեալ ի հռչակաւոր մեծաստանն որ կոչի Աւագ վանք և անդ փոքր մի ծրեալ. և ապա անտի վասն ահին ժանտաբարոյ Զիթախին եկաք ի քաղաքս մեր Պաւնտոս ընդ հովանեաւ Սուրբ Ամենափրկչին և Սուրբ